ԿԶՆԱԿ ՀԻՄՆԱԴՐԱՄ



# ԳՆԱՀԱՏՈՒՄ

ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄՇԱԿՄԱՆ ԵՎ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԲԱԺԻՆ



# Ինչ է պետք իմանալ րակրթության պետական նոր չափորոշչով արդյունավետ նահատում իրականացնելու համար

# ՀԱՆՐԱԿՐԹՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՉԱՓՈՐՈՇԻՉ (ՀՊՉ)



**Ուսումնառության արդյունքների գնահատումը նպատակ ունի որոշելու սովորողի կարողունակությունների զարգացման աստիճանը ըստ ուսումնական առարկաների՝ չափորոշչով սահմանված վերջնարդյունքներին համապատասխան ձեռք բերած գիտելիքների ու հմտությունների մակարդակի, ինչպես նաեւ դիրքորոշումների ու արժեքների ձեւավորման:**

(ՀՊՉ, IX, կետ 37)

**Հանրակրթական ուսումնական հաստատությունում ընթացիկ գնահատումն իրականացվում է քանակական (միավորային) եւ ձեւավորող (ուսուցանող) ձեւերով:**

(ՀՊՉ, IX, կետ 38)

# ԳՆԱՀԱՏՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀՊՉ-ՈՎ ԱՌԱՋԱՐԿՎՈՂ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ





- Քանակական (միավորային) գնահատման համար կիրառվում է 10-միավորային սանդղակ, որտեղ որեւէ թիվ անվաբարար գնահատական չի համարվում, եւ յուրաքանչյուր նիշ նկարագրում է աշակերտի հաջողության որեւէ մակարդակ (ՀՊՉ, IX, կետ 39):
- Ձևավորող (ուսուցանող) գնահատման մեթոդներն ու ծևաչափն ընտրում է հանրակրթական ուսումնական հաստատությունը (ՀՊՉ, IX, կետ 41):
- 1-4 դասարաններում եւ 5-րդ դասարանի առաջին կիսամյակում միավորային գնահատում չի իրականացվում: Ընթացիկ գնահատումը կատարվում է բնութագրման միջոցով, իսկ, որպես տարեկան ամփոփիչ գնահատական, կազմվում է յուրաքանչյուր սովորողի ուսումնական առաջադիմության բնութագիրը՝ համաձայն կրթության պետական կառավարման լիազորված մարմնի սահմանած կարգի (ՀՊՉ, IX, կետ 44):
- Միավորային գնահատումը կիրառվում է սկսած 5-րդ դասարանի 2-րդ կիսամյակից (ՀՊՉ, IX, կետ 45):
- 7-12-րդ դասարաններում յուրաքանչյուր աշակերտ տարեկան իրականացնում է առնվազն մեկ ուսումնական նախագիծ՝ իր ընտրած առարկայից կամ առարկաներից (ՀՊՉ, IX, կետ 46):
- Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող սովորողների գիտելիքների քանակական (միավորային) ընթացիկ գնահատումն ու ամփոփիչ ատեստավորումը կարող է իրականացվել ըստ ԱՈՒՊ-ի՝ 10-միավորային սանդղակով (ՀՊՉ, IX, կետ 53):


ԳՆԱՀԱՏՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ
Գնահատման եղանակներ
Ընթացիկ գնահատում
Ամփոփիչ գնահատում
Գնահատման ձևեր
Ձևավորող գնահատում
Միավորային գնահատում
Բնութագրող
Գնահատման տեսակներ
• բանավոր հարցում
• գրավոր աշխատանք (էսսե, շարադրություն, թելադրություն, թեստ)
• գործնական աշխատանք
• ուսումնական նախագիծ
• թեմատիկ աշխատանք
• կիսամյակային ամփոփիչ աշխատանք
• բնութագիր
• ամփոփիչ ատեստավորում

# ԻՆՉ Է ՁԵՎԱՎՈՐՈՂ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ (ՁԳ)

1

**Ձեւավորող գնահատումը՝**

ուսուցչին հնարավորություն է տալիս պարզելու յուրաքանչյուր սովորողի եւ ամբողջ դասարանի ձեռքբերումները,

2

**Ձեւավորող գնահատումը՝**

ապահովում է հետադարձ կապն ուսումնական գործընթացում, որի արդյունքների հիման վրա իրականացվում են աշխատանքներ յուրաքանչյուր սովորողի եւ ամբողջ դասարանի առաջադիմության բարելավման ուղղությամբ:

3

**Ձեւավորող գնահատումը՝**

կարող է իրականացվել թեստերի, բանավոր հարցումների, գործնական, տնային աշխատանքների միջոցով:

4

**Ձեւավորող գնահատման**

ժամանակ օգտագործվում են սովորողի առաջընթացը բնութագրող որակումներ, վերլուծություններ եւ մեկնաբանություններ:

# Գնահատման կիրառման հետ կապված թյուրընկալումները



# ՁԵՎԱՎՈՐՈՂ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԲԱՂԱԴՐԻՉՆԵՐԸ



# ՁԵՎԱՎՈՐՈՂ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՔԱՅԼԱՇԱՐԸ



# Ինչը պետք է փոխվի…



- ✔ ՁԳ-ի ընկալումը մանկավարժների և ծնողների կողմից:
- ✔ Ուսուցիչների մոտիվացիան և կարողությունը ՁԳ նյութեր կազմելու ու կիրառելու համար:
- ✔ Սովորողների վերաբերմունքը ՁԳ-ի նկատմամբ:
- ✔ Սովորողների ներգրավվածությունը ՁԳ-ի ընթացքում:
- ✔ Թիմային և համագործակցային միջավայրի առավելության գիտակցումը:
- ✔ Ոչ միավորային գնահատման արդյունքների ներկայացման ձևը:

# ՄԻԱՎՈՐԱՅԻՆ ԵՎ ՁԵՎԱՎՈՐՈՂ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՀԱՄԵՄԱՏՈՒՄ

| ՄԻԱՎՈՐԱՅԻՆ | ՁԵՎԱՎՈՐՈՂ |
|---|---|
| Իրականացվում է ուսուցման փուլի ավարտին: | Իրականացվում է ուսուցման ողջ ընթացքում: |
| Գնահատումն իրականացնում է ուսուցիչը: | Գնահատմանը մասնակցում են, թե՛ ուսուցիչը, թե՛ սովորողը: |
| Գնահատման արդյունքում տրվում է առաջադիմության թերթիկ: | Գնահատման արդյունքում տրվում է սովորողի բնութագիրը: |
| Ամրագրում է ուսուցման փուլի արդյունքը: | Բացահայտում է սովորողի ուժեղ և թույլ կողմերը, բարելավում է ուսուցման գործընթացը: |
| Գնահատվում է նույն հաստատուն՝ 1-10 սանդղակով: | Գնահատումն իրականցվում է տարբեր ՁԳ գործիքներով: |



**«Մենք գնահատում ենք ոչ թե մարդուն,**
**այլ նրա մտքերն ու ձեռքբերումները»:**

*Արսեն Վենգեր*